ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2024թ. հունվար- հուլիս

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-հուլիսին կազմել է 9.6%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է 0.8 տոկոսային կետով:

- ՏԱՑ-ի 9.6% աճին հիմնական դրական նպաստում ունեցել է արդյունաբերության ոլորտը՝ 3.0 տոկոսային կետով, որին հաջորդում են առևտրի ոլորտը՝ 3.0 տոկոսային կետով, ծառայությունների ոլորտը՝ 2.2 տոկոսային կետով, շինարարության ոլորտը՝ 1.2 տոկոսային կետով և գյուղատնտեսությունը 0.1 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ



ՏԱՑ–ի 9.6%-ին ճյուղերի նպաստը, տոկոսային կետ
2024 հունվար–հուլիս



2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 4.5%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 5.2 տոկոսային կետով (տ/կ), կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.8 տ/կ, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.7 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.5 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 0.6 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.4 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.2 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.2 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն են ունեցել տրանսպորտ՝ -2.3 տ/կ և տեղեկատվություն ու կապ -1.9 տ/կ ծառայության տեսակները:

Ծառայությունների ծավալի աճ



3. Առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 21.4%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի և մեծածախ առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 10.1% և 30.1% աճերը:
- Բացասական ազդեցություն է ունեցել ավտոմեքենաների առևտրի ոլորտի -8.8% կրճատումը:

Ներքին առևտրի շրջանառության աճ



4. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 16.1%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 38.4% աճը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալի 110% աճը (որից՝ համաշխարհային բանկի միջոցները՝ 57.6%, ՎԶԲ-ն՝ 560%-ով, ԱԶԲ-ն՝ 190%, ԳԶԲ-ն՝ 190%) և բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 64.9% աճ:

- Բացասական ազդեցություն են ունեցել համայնքների միջոցներով իրականացված շինարարության -17.3%, մարդասիրական օգնության միջոցներով -28.6% և կազմակերպությունների միջոցներով -2.9% կրճատումները:

Շինարարության ծավալի աճ



5. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 20,424.5 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 95.0%, որից արտահանման ծավալը կազմել է 8,738.7 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 120%, իսկ ներմուծումը՝ 11,685.8 ԱՄՆ դոլար, աճը 79.1%:

6.1 Արտահանում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն այլ երկրների գծով (5.3 անգամ): ԱՊՀ երկրներ արտահանումը կրճատվել է -20.9%-ով (որից՝ ԵԱՏՄ՝ -21.2%), իսկ ԵՄ երկրները՝ -26.3%-ով:

- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք աճը՝ 1.5%, բուսական ծագման արտադրանք, աճը՝ 23.6%, հանքահումքային արտադրանք՝ 18.0%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 9.5%, թուղթ և թղթից իրեր՝ 20.2%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 5.8%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 690%, սարքեր և ապարատներ՝ 1.7%:

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -35.6%, պատրաստի սննդի արտադրանք՝ -2.2%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -29.5%, մանածագործական իրեր՝ -2.1%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ -1.0%, պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -25.8%, փայտ և փայտյա իրեր՝ -87.6%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -39.2%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -5.4%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -81.5%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ -3.4%, արվեստի ստեղծագործություններ՝ -26.9%:

Արտահանման ծավալի աճ



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6.2 Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն ԱՊՀ երկրների գծով (4.1 անգամ), որից ԵԱՏՄ-ն՝ 4.2 անգամ: ԵՄ երկրների ներմուծումը կրճատվել է -14.4%-ով, իսկ այլ երկրները՝ -12.8%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է 79.1%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը՝ 3.9%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 1.6%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 10.7%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 8.4%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 12.5%, մանածագործական իրեր՝ 6.8%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 0.1%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 1.4%, մեքենաների սարքավորումներ և մեխանիզմներ՝ 4.1%, սարքեր և ապարատներ՝ 0.8%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 20.1%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 810%, արվեստի ստեղծագործություններ՝ 260%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ բուսական ծագման արտադրանքը՝ -3.8%, հանքահումքային արտադրանքը՝ -4.0%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -7.5%, փայտ և փայտյա իրեր՝ -5.0%, թուղթ և թղթից իրեր՝ -2.2%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -7.7%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ -55.7%:

Ներմուծման ծավալի աճ



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6. Արդյունաբերություն

- Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 15.7%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. մշակող արդյունաբերությունը՝ 23.6%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 13.0%, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ 5.6%: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է -8.6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ



7.2 Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ ծխախոտային արտադրատեսակները՝ 8.4%, մանածագործական արտադրատեսակները՝ 8.8%, փայտանյութի մշակում, բացի կահույքից՝ 22.6%, թղթի և թղթե արտադրատեսակները՝ 4.3%, դեղագործական արտադրանքը՝ 5.6%, ռետին և պլաստմասսա՝ 9.0%, հիմնական մետաղները՝ 260.0%, պատրաստի մետաղական արտադրատեսակները՝ 11.9%, էլեկտրական սարքավորանք՝ 60.9%, կահույքի արտադրությունը՝ 38.7%:

Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի սննդամթերքի արտադրությունը կրճատվել է -2.1%-ով, կաշվի, կաշվե արտադրատեսակները՝ -4.7%, խմիչքներինը՝ -1.1%-ով, հագուստի արտադրությունը՝ -0.9%-ով, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը -5.8%-ով, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ -16.1%-ով, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ -8.0%-ով, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը՝ -4.2%-ով, արտադրատեսակներ չներառված ուրիշ խմբավորումներում՝ -0.5%, մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում՝ -34.0%, այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն՝ -43.3%, մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում՝ -13.3%:

Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի նպաստումը մշակող արդյունաբերության աճին, 2024թ. հունվար-հուլիս, տոկոսային կետ